ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 փետրվարի 2013թ. թիվ 17-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԵՎ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի ԹԻՎ 152-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն “Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի 1-ին մասի «բ» և «ե» ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Ռ.Ասատրյանի դիմումում նշված հանգամանքները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ըստ ստացված դիմումի ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս.Ավետիսյան 17բ/5 հասցեի պետական բնակարանը, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, անհատույց մասնավորեցնել դրա օգտագործման իրավունք ունեցող ընտանիքին՝ համաձայն հավելվածի:

2. Օրդեր ստացած քաղաքացիների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, իսկ նվիրատվությամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սպիտակի տարածքային ստորաբաժանումում:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. օգոստոսի 18-ի թիվ 152-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. փետրվարի 20
ք.Վանաձոր